Զապել Եսայան

Նամակ Սոֆի Եսայանին 3

Մեկ օրից մյուսը ձգձգում էի պատասխանս, այն հույսով, որ ազատ ժամանակ կգտնեմ գրելու: Բայց երևի դա հնարավոր չէ, որովհետև միշտ Էլ չափազանց զբաղված եմ: թերևս մի քանի օր հետո կարողանամ աշխատանքս դասավորել ավելի կազմակերպված ձևով:

Հեռագիրդ մեզ հուսախաբ արեց, սակայն ես և Հրանտը նախընտրեցինք չառարկել, որպեսզի ճնշում գործադրած չլինենք քո որոշումների վրա: Վերջին նամակներդ ինչ-որ չափով անհասկանալի են: Իմ կարծիքով՝ բոլոր դեպքերում էլ անհանգստանալու ոչինչ չկա, քանի որ մեր առջև պարզված է Հայաստանի հեռանկարը: Այս ամենի մասին մենք ավելի հանդարտ ու երկար կխոսենք հետո, երբ այստեղ գաս:

Առողջությունս լավ է, այլևս չեմ հազում, չնայած որ գիշերները մինչև ուշ աշխատում եմ: Հիմա Էլ Տատան Է սարսափելի հազում, այն աստիճանի, որ երեք օր Է, ինչ չի կարողանում քնել: Բայց դա վտանգավոր չէ, ես այդ գիտեմ անձնական փորձով: Միայն թե՝ հոգնեցուցիչ է:

Հրանտը պետք է քեզ դրած լինի Մոսկվայի պատվերի մասին: «Դա ինձ հետաքրքրում է շատ տեսակետներով: Հարկավոր է, որ գտնեմ լուսանկարներ, փաստաթղթեր և ձեռագրեր, ֆոտո-պատճեններ: Կարծեմ իմ ներքին ցանկությանն ընդառաջելու համար պատվիրեցին, որ գրական կյանքի վերաբերյալ հուշերս գրեմ: Այդ աշխատության մեջ կարելի է ընդգրկել արևմտահայ ժամանակակից գրականության պատմությունը, գրեթե

ամբողջությամբ: Պիտի ջանամ աշխատությունը գրել խնամքով և անթերի ոճով, որպեսզի ներկայացնի նաև գեղարվեստական արժեք:

Ես նամակ գրեցի Կոստերի գրքի թարգմանության կապակցությամբ: Եթե համաձայնություն կայացվի ապա մենք կհարստանանք: Հիշյալ երկու աշխատությունները կարող են մեզ բերել մոտ 60 000 ֆրանկ:

Մի խոսքով՝ ես զոհ եմ, և խանդավառված եմ աշխատանքով: Հուսով եմ, որ քո հաղորդելիք լուրերն էլ լավ կլինեն, և որ միասին ուրախ օրեր կանցկացնենք, երբ մեզ միանաս այստեղ:

Ամուր համբուրում եմ քեզ և սպասում նամակիդ:

Քո՝ Զապել

Բնագիրը՝ ԳԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, № 187 (թարգմանություն ֆրանսերեն բնագրից):

1932, մարտի 2, Բարիզ